քրքրական ուսումնասիրութիւնը[1]»։ Այս վերաբերում է մեր Արարատի 1906 թուականի չորս համարներում տպագրածին[2]։ Մինչդեռ Ստ. Մալխասեանը առանց այս ի նկատի ունենալու, քննութեան առնելով սոյն նիւթի միայն շարունակութիւնը, որ լոյս տեսաւ նոյնպէս Արարատում[3] և առանձին արտատպութեամբ, իւր մի ընդարձակ բանասիրականում խօսելով մեր Բաջանց տան [=Արշակունեաց[4]] վէպի մասին Տփխիսում արած դասախօսութեան առթիւ և անցողակի քննութեան առնելով և «Զօջանց տան պատմականը» յանկում է հետևեալ եզրակացութեան. «Չէ կարելի ասել, որ համեմատութիւնները բոլորը աջող են և համոզիչ. բայց աջողած համեմատութիւնների շարքը ստիպում է ընթերցողին խոստովանել, թէ այդ նմանութիւնները լոկ պատահական երևոյթներ չեն, այլ թէ արդարև կայ ծննդաբանական կապ եօթներորդ դարի հայ պատմութեան ու նշանաւոր գործիչների մէջ մի կողմից և Սասմայ ծռերի կամ «Զօջանց տան» հերոսների ու նրանց գործերի մէջ միւս կողմից[5]»։

Մեզ թւում է որ քննադատը անյաջող համեմատութիւնները պէտք է յառաջ բերէր և այն էլ հիմնաւորուած, որպէսզի հեղինակին առիթ տրուէր կամ նորանոր ապացոյցներով հանդէս գալու և կամ համոզուելով քննադատի զօրեղ առարկութեանց հրաժարուէր իւր թեզիսից։ Յամենայն դէպս «աջողած համեմատութիւնների շարքն» էլ բաւական է մեզ մեր տեսութեան վրայ պնդելու նորանոր հատուկտոր ապացոյցներով, ապագային թողնելով նիւթի ամբողջական վերամշակութիւնը։

Կան սակայն մեր Զօջանց վէպում անձնանուններ, որ ոչ մի և ոչ իսկ անյաջող փորձի չէին ենթարկւում, յատկապէս Ղումբիկ

---

1. «Զարկ» շաբաթաթերթ 1907, № 3. էջ 71. Տփխիս.

2. Մամիկոնեանց պատմ. եւ Յաւելուած. Արարատ 1906. Ապրիլ էջ 328—342. Յունիս—Յուլիս էջ 597—603. Օգոստ.—Նոյեմբեր էջ 712—752 եւ Դեկտեմբեր էջ 861—879։

3. Արարատ 1907. «Զօջանց տան... պատմականը» Հոկտ.— Նոյեմբեր էջ 984—1008 եւ 1908. Յունուար էջ 102—124։

4. Քանի որ Բաջանց տան վէպի մասին մեր այս յառաջաբանում յետոյ յիշատակութիւններ են լինելու եւ մեր այդ վէպի ընդարձակ ուսումնասիրութիւնը տակաւին լոյս չի տեսել, ուստի ընթերցողները կարող են առժամանակ ի նկատի ունենալ Ստ. Մալխասեանի այդ յօդուածը եւ մեր նամակը Տփխիսի Հովիւ շաբաթաթերթում 1908 ամի. № 18։ Իսկ Բաջանց տան վէպի երեք փոփոխակներից յատկապէս «Խօսրով Թագաւորը» (Ազգագր. Հանդէս XIV, էջ 86—89. Թիֆլիս 1906).

5. «Մշակ» լրագիր 1909. № 11-ի թերթօն. էջ 2—3. Թիֆլիս.